

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՎՏՈՊԱՐԿԻ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի պետական ագրարային համալսարանի ավտոպարկը ստեղծվել և գործում է որպես ՀՊԱՀ կառուցվածքային ստորաբաժանում, որի կանոնակարգը ըստ ՀՊԱՀ կանոնադրության 11-րդ կետի հաստատում է ՀՊԱՀ-ի խորհուրդը և գործողության մեջ դրվում ՀՊԱՀ ռեկտորի հրամանով:
2. Ավտոպարկի լրիվ անվանումն է՝ Հայաստանի պետական ագրարային համալսարանի ավտոպարկը (ՀՊԱՀ ավտոպարկ), որի հասցեն է ք. Երևան, Տերյան փող. 74:

ԱՎՏՈՊԱՐԿԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3. Ավտոպարկի հիմնական խնդիրը ՀՊԱՀ տրանսպորտային սպասարկումն է: Այդ հիմնական խնդրից ելնելով ՀՊԱՀ ավտոպարկն իրականացնում է.
 - ա) ՀՊԱՀ ուսումնական և արտադրական պրակտիկայի տրանսպորտային սպասարկումը՝ ըստ սահմանված և ավտոպարկին իջեցված գրաֆիկի.
 - բ) ՀՊԱՀ բեռների փոխադրում ՀՀ տարածքում.
 - գ) ՀՊԱՀ ծառայողական տրանսպորտային սպասարկում.
 - դ) ՀՊԱՀ աշխատակիցների և ուսանողների հանգստի միջոցառումների տրանսպորտային սպասարկում
 - ե) վճարովի տրանսպորտային սպասարկում օրենսդրությամբ սահմանված կարգով.
 - զ) ՀՊԱՀ տրանսպորտային միջոցների տեխնիկական սարքին վիճակում պահելն ու անվտանգ շահագործումը:
4. ՀՀ կառավարության 2005թ.-ի սեպտեմբերի 15-ի «Հայաստանի պետական ագրարային համալսարանը վերակազմակերպելու մասին» թիվ 1567 որոշմամբ ՀՊԱՀ սովորողների և աշխատակիցների հանգստի կազմակերպման ուղղությամբ համալսարանին վերապահված լիազորության իրականացման շրջանակներում և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին 2002թ. հոկտեմբերի

10-ի ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված պայմաններով» ՀՊԱՀ ավտոպարկը կոլեկտիվի անդամների և այլ անձանց պատվերով նրանց տրամադրում է տրանսպորտային միջոցներ՝ համապատասխան վճարով:

5. Վճարի չափը որոշվում է պատվիրատուի հետ կազմված համապատասխան նախահաշիվներով՝ համաձայնեցված Համալսարանի ղեկավարության հետ:
6. Ավտոպարկի գույքը և ֆինանսական միջոցները պատկանում են Համալսարանին:

ԱՎՏՈՊԱՐԿԻ ՎԱՐԻՉԸ

7. Ավտոպարկի աշխատանքային գործունեությունը ղեկավարում է ավտոպարկի վարիչը, որը սահմանված կարգով աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատվում ռեկտորի հրամանով:

8. Ավտոպարկի վարիչը.

ա) կատարում է աշխատանքի բաշխում ավտոպարկի աշխատակիցների միջև՝ ըստ նրանց մասնագիտության և աշխատանքային պայմանագրերի պայմանների, ինչպես նաև իրականացնում է ավտոպարկի խնդիրները կատարելու ուղղությամբ այլ գործունեություն,

բ) միջոցներ է ձեռնարկում համալսարանի տրանսպորտային միջոցների տեխնիկական սարքինությունն ու անվտանգ շահագործումը, ինչպես նաև դրանց ըստ նշանակության և արդյունավետ օգտագործումն ապահովելու ուղղությամբ,

գ) միջոցներ է ձեռնարկում ավտոպարկում և շրջապատում բնապահպանական, սանիտարա-համաճարակային և հիգիենիկ անվտանգության ապահովման ուղղությամբ ըստ սահմանված կանոնների,

դ) կազմակերպում է ավտոտեսչության մարմիններում համալսարանի տրանսպորտային միջոցները սահմանված կարգով և ժամկետներում գրանցել – ձևակերպելու, ինչպես նաև տեխնիկական զննության ներկայացնելու աշխատանքը,

ե) ապահովում է տրանսպորտային միջոցների և ավտոպարկին հատկացված այլ գույքի պահպանությունը և պատասխանատվություն է կրում դրանց պատճառված վնասի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

զ) օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում համապատասխան հաշվետվություններ է ներկայացնում ՀՊԱՀ հաշվապահություն ավտոպարկի ֆինանսատնտեսական գործունեության մասին:

ԱՎՏՈՊԱՐԿԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ

9. Ավտոպարկի աշխատողները պարտավոր են կատարել ավտոպարկի վարիչի կարգադրությունները, որոնք բխում են օրենսդրությամբ և սույն կանոնակարգով նախատեսված նրա իրավասությունից և ավտոպարկի գործունեության բնույթից ու առանձնահատկություններից:
10. Ավտոպարկի աշխատողներն աշխատանքի են ընդունվում և աշխատանքից ազատվում ռեկտորի հրամանով:
11. Ավտոպարկի աշխատողների վարձատրությունը կատարվում է համալսարանի կողմից սահմանված հաստիքացուցակի, դրույքների և վճարովի ծառայությունների համար կազմված նախահաշիվներում որպես աշխատավարձ նշված գումարի չափից ելնելով:
12. Ավտոպարկի վերակազմակերպումը և գոյության դադարեցումը տեղի է ունենում ՀՊԱՀ-ի կողմից` օրենսդրությամբ սահմանված կարգով: